ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 331 – Ա **17 օգոստոսի 2020 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՆՈՐԱՏՈՒՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԴԱՎԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԵՏ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-ԻՆ ԿՆՔՎԱԾ N 24 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. 2020 թվականի օգոստոսի 14-ից լուծել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Նորատուսի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Դավիթ Գրիգորյանի հետ 2019 թվականի օգոստոսի 14-ին կնքված N 24 աշխատանքային պայմանագիրը:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Լուսինե Վարդանյանին:

17.08.2020

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք.Գավառ